

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏՎԵՑԻՆ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐՈՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԳՅՈՒՆՔՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԿԼԻՆԵՆ 120 ՀԱՄԱՄԱՆԱԿԱՆ ԵՎ 30 ՄԵՇԱՄԱՆԱԿԱՆ ԴԱՏԱՍՎՈՐՆԵՐ



Հունիսի 21-ին Վրաստանի խորհրդարանն առաջին ընթերցմամբ հաստատեց սահմանադրական փոփոխությունների նախագիծը: Քվեարկությանը գրանցվեց 142 պատգամավոր, որից 136 պաշտպանեց սահմանադրական փոփոխությունները, դեմ քվեարկեց 5 պատգամավոր:

Ե ապահովել «Եվրոպական Վրաստանի» եւ «Միասնական ազգային շարժման» պատգամավորների բացակայության պայմաններում: Թեև իրավիճակն այնպիսին էր, որ սահմանադրական փոփոխությունների երկրորդ եւ երրորդ լուծումներին «Ազգային շարժման» եւ «Եվրոպական Վրաստանի» կողմից լիազուցված նիստի բոլորի շարունակման պայմաններում փոփոխությունների ընդունման համար կպահանջվեր խորհրդարանում մնացած մյուս (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

Հունիսի 21-ին խորհրդարանում սահմանադրական փոփոխությունների առաջին լուծումը ցույց փաստեց, որ հարցի կարգավորման համար պատգամավորների անհրաժեշտ 113 ծայրը հնարավոր

ԳԻՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՀԱՄԱՎԱՐԱԿՈՎ ԴԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԳՆՈՐԱԿՎԱԾ ԵՐԿԻՐԸ ԿԱՆԳՆԵՅՐԵՑ ԼՈՒՅՑ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԱՌՁԵՎ» ԿԵՐՁԻՆ ՄԵՎ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՐՐՈՐԴ ԱՆԿԱՄ ՀԱՆԴԵՍ ԵՎԱՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 26-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հանդես եկավ խորհրդարանում կառավարության մեկամյա գործունեության հաշվետվությամբ:



Նշենք, որ ելույթը վերջին մեկ ամսվա ընթացքում երրորդն էր, որի ընթացքում Գիորգի Գախարիան խորհրդարանի առջեւ մանրամասնում էր կորուսված ժամանակի իշխանության կողմից իրականացվելիք քայլերը, հակաճգնաժամային ծրագրերով նախատեսված սոցիալական օգնության ու գործարարության աջակցության միջոցառումները, երկրի նորացված, հակաճգնաժամային ուղղվածության բյուջեն: Ներկայացնելով կառավարության գործունեության հաշվետվությունը՝ վարչապետ Գիորգի

Գախարիան նախ անդրադարձավ խորհրդարանի կողմից առաջին երկու ընթերցմամբ ընդունված (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՎԵՑ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ 16 ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻՆ ԳԵՐԱՉԱՆՅՈՂ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ

Հունիսի 24-ին Վրաստանի խորհրդարանը հավանության արժանացրեց 16 միլիարդ լարին գերազանցող Վրաստանի 2020 թվականի հակաճգնաժամային բյուջեն: Խորհրդարանական ընդդիմությունը չմասնակցեց բյուջեի քննարկմանն ու հաստատմանը:

Ընդունված բյուջեի համաձայն, երկրի կառավարությունը մինչև ընթացիկ տարվա վերջ ծախսելու է 16 միլիարդ լարին գերազանցող գումար: Պետական բյուջեի ծախսերի հոդվածն ավելացել է 1,5 միլիարդ լարին: Փաստաթղթի համաձայն, բյուջետային լրացուցիչ ծախսերն անհրաժեշտ են կորուսված համավարակով պայմանավորված սոցիալական եւ տնտեսական ցնցումների մեղմացման համար: Միաժամանակ, 2020 թվականի նորացված բյուջեում հակաճգնաժամային միջոցառումների համար հատկացվող գումարը կազմել է գրեթե 3 միլիարդ լարի: Այդ գումարը ծախսվելու է 18 ուղղություններով, որոնցից են՝ եկամուտը կորցրած քաղաքացիների եւ սոցիալապես անպաշտպան խմբերի օգնությունը, կոմունալ ծախսե-

րի փոխհատուցումը, հարկային արտոնություններ ներառող օգնությունը գործարարությանը եւ այլն: Կառավարության որոշման համաձայն, ընթացիկ եւ կապիտալ ծախսերը նվազեցվել են 600 միլիոն լարով, ինչը նշանակում է, որ մի շարք պետական գերատեսչությունների ֆինանսավորումը նվազեցվում է: Բյուջեի համաձայն, ընթացիկ տարվա վերջին Վրաստանի արտաքին պարտքի ծավալը կկազմի համախառն ներքին արտադրանքի (ՀՆԱ) 55 տոկոսը, իսկ տնտեսական աճի ցուցանիշը կնվազի 4 տոկոսով:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԱԼՈՍԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻՆ ԸՆԹՐԱՎՈՐԵՑ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հունիսի 23-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին ծննդյան օրվա առիթով շնորհավորական ուղերթ է հղել Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանին:

Վրաստանի ժողովրդի եւ անձամբ իր անունից շնորհավորելով Հայաստանի նախագահին՝ Սալոմե Զուրաբիշվիլին մաղթել է առողջություն, երջանկություն եւ հաջողություն՝ ի բարօրություն Հայաստանի ու հայ ժողովրդի:

մասնավորապես ասված է Վրաստանի նախագահի շնորհավորական ուղերթում:

Հայաստանի նախագահին ծննդյան օրվա առիթով շնորհավորել են նաեւ Զինաստանի նախագահ Սի Ծինփինը, Իտալիայի նախագահ Սերջիո Մատարելլան, Ղազախստանի նախկին նախագահ Նուր-տուլթան Նազարբաևը, Ղազախստանի գործող նախագահ Կասիմ-ժոմարտ Տոկաևը, Սերբիայի նախագահ Ալեքսանդր Վուչիչը, Ռուսաստանի վարչապետ Միխայիլ Միշուստինը, Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն, պաշտոնական այլ անձինք:

«Պատմականորեն մեր երկրները կապված են բարեկամության եւ համագործակցության ամուր թելերով: Թե՛ հայ ժողովրդի, թե՛ համաշխարհային հանրության համար հիմա դժվարին օրեր են, սակայն ես հպարտ եմ, որ մեր բարեկամությունն ու համագործակցությունը մնում են անձեռնմխելի, եւ մենք մեծ հեռանկարներ ենք տեսնում մեր կապերի խորացման գործում»,-

ՄՈՑԻԱԼԱԿԱՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՓՈՒՆՀՏՆՈՒՅՈՒՄ Է ՄՏԱՅԵԼ ԳՐԵԹԵ 185 ՀԱՉԱՐ ՄԱՐԴ

Ինչպես արդեն հաղորդել ենք, տնտեսական ճգնաժամի հետեւանքների վերացման համար, Վրաստանի կառավարությունը կորոնավիրուսով պայմանավորված մշակել է հակաճգնաժամային ծրագիր, որի կետերից մեկը նախատեսում է համավարակի տարածումը կանխելու նպատակով հայտարարված արտակարգ դրության եւ դրան հաջորդած սահմանափակումների արդյունքում տուժածներին փոխհատուցման տրամադրում:

Ելնելով վերոնշյալից՝ նախատեսվում էր 300-ական լարիի միանշանակ փոխհատուցում տրամադրել ինքնազբաղներին եւ վեց ամսվա ընթացքում ամսական 200-ական լարի աշխատանքը կորցրած աշխատողներին:

Հունիսի 24-ի դրությամբ, առողջապահության նախարարության կայք-էջում գրանցված 149 747 ինքնազբաղ անձանցից 300 լարիի փոխհատուցում է ստացել շուրջ 93 867 մարդ: Ընդհանուր (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԼԻԱ ԳԻԳԱՈՒՐԻՆ ԱՆԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ

Հունիսի 25-ին Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարարի տեղակալ Լիա Գիգաուրին աշխատանքային այցով գտնվում էր Ախալքալաքում:



Կորոնավիրուսով պայմանավորված սահմանափակումների, սոցիալական հեռավորության պահպանմամբ, կայացավ Լիա Գիգաուրու եւ տեղական իշխանության մարմինների Ախալքալաքի քաղաքապետ Յուրի Ունանյանի, մունիցիպալիտետի կենտրոնում գործող Սանցիտե-Ջավախեթիի համալսարանի մասնաճյուղի դասախոսական կազմի, ուսանողների, ինչպես նաեւ հասարակական կազմա-

կերպությունների եւ լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ բացօթյա հանդիպումը:

Լիա Գիգաուրին նշեց, որ պետնախարարությունն առաջիկա 4 տարվա համար մշակում է ազգային ռազմավարություն եւ գործողությունների պլան, որոնք անմիջականորեն վերաբերվելու են Վրաստանի ազգային փոքրամասնություններին, պատմեց բոլոր այն (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

COVID - 19

ԱՇԽԱՐՀՈՒՄ՝ 9 ՄԻԼԻՈՆ 724 ՀԱՋԱՐԻՑ ԱՎԵԼԻ ՎԱՐԱԿՎԱԾ, 5 ՄԻԼԻՈՆ 260 ՀԱՋԱՐԻՑ ԱՎԵԼԻ ԱՊԱՔԻՆՎԱԾ

Աշխարհում նոր տիպի կորոնավիրուսային վարակի COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն անցել է 9 միլիոն 724 հազարը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 492 հազարը: Ապաքինվել է ավելի քան 5 միլիոն 260 հազարից ավելի մարդ:



Վիրուսով վարակվածների թվով առաջին տեղում գտնվող ԱՄՆ-ում 2 504 676 հաստատված դեպք կա: Այստեղ մահացածների թիվը 126 785 է: Այս ցուցանիշով ԱՄՆ-ն առաջինն է աշխարհում: Ընդհանուր ցուցանիշով երկրորդ տեղում հայտնված Բրազիլիայում հաստատված դեպքերի թիվը հասել է 1 233 147-ի, մահացածներինը՝ 55 054-ի: Մահերի թվով Բրազիլիան աշխարհում դարձել է երկրորդ երկիրը: Վարակվածների


թվով հաջորդ տեղում Ռուսաստանն է, որտեղ ընդհանուր առմամբ կորոնավիրուսով վարակվել է 620 794 մարդ: Երկրում վարակի հետեւանքով մահացել է 8 781 մարդ:

Վարակվածների թվով հաջորդում են Հնդկաստանը, Մեծ Բրիտանիան, Իսպանիան, Պերու, Չինիան, Իտալիան եւ Իրանը:

Համաճարակի սկզբնաղբյուր Չինաստանում վարակվածների թիվը կազմում

է 83 462, մահացածներինը՝ 4 634:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով, վարակ արձանագրած երկրների եւ տարածքների թիվը հասել է 215-ի:



ՌՈՒՍԱՍՏԱՆ ԶՈՐԱՀԱՆԴԵՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՂՈՍԱԿԻ 75-ԱՄՅԱԿԻՆ

Հունիսի 24-ին Մոսկվայի Կարմիր հրապարակում անցկացվեց գերմանական ֆաշիզմի դեմ Հաղթանակի 75-ամյակին նվիրված զորահանդես: Շքերթին ներգրավված էր 15 հազար զինվորական, 234 միավոր տեխնիկա, 80 ինքնաթիռ եւ ուղղաթիռ: Մասնակիցների թվում էր նաեւ 75 հոգուց բաղկացած հայկական զորախումբը՝ զննապետ Աշոտ Հակոբյանի ղեկավարությամբ: Նրանք ծածանում էին Թամանյան դիվիզիայի մարտական եւ Հայաստանի դրոշները:

Հիշեցնենք, որ կորոնավիրուսի համավարակով պայմանավորված Հաղթանակի 75-ամյակին նվիրված զորահանդեսը մայիսի 9-ին չանցկացվեց՝ որոշվեց այն անցկացնել հունիսի 24-ին: Հունիսի 24-ը նույնպես խորհրդանշական է. 1945 թվականի այդ օրը նացիստական Գերմանային հաղթած զինվորականների շարասյունը հանդիսավոր քայլերթով անցավ Կարմիր հրապարակով:

ՖՐԱՆՍԻԱ ԶՈՒՇԱՑՈՒՄ ԹՈՒՔԻԱՅԻՆ

- Թուրքիան վտանգավոր խաղ է խաղում Լիբիայում, - հայտարարել է Ֆրանսիայի ցախազահ եմանուել Մակրոնը:

Ֆրանսիայի ղեկավարի խոսքով, Լիբիայում Թուրքիայի գործողությունները հակասում են Բեռլինում կայացած միջազգային համաժողովում ստանձնած պարտավորություններին:

- Այս մասին ես ասել եմ նաեւ ԱՄՆ ցախազահ Դոնալդ Թրամփի հետ զրույցում, - հավելել է Մակրոնը:

Նա հիշեցրել է Ֆրանսիայի դիրքորոշման մասին, որը Լիբիայի բոլոր հակամարտող կողմերին կոչ է անում դադարեցնել ռազմական գործողությունները:

Նա նաեւ ընդգծել է Լիբիայի ներքին իրավիճակի արտաքին միջամտությունը կամխելու անհրաժեշտությունը:

Նշենք, որ Լիբիայում շարունակվում է առճակատումը Ազգային համաձայնության կառավարության (PNS) ղեկավար Ֆայեզ Սարաջի, որը վերահսկում է Տրիպոլի, եւ երկրի արեւմուտքում գտնվող տարածքների ու Լիբիայի ազգային բանակի ղեկավար Խալիֆա Հաֆթարի միջեւ, որը մեկ տարուց ավելի է՝ փորձում է զավթել մայրաքաղաքը:

ԵԳԻՊՏՈՍ ԲԱՆԱԿԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՆԵՐԽՈՒԺԵՆ ԼԻԲԻԱ

Եգիպտոսը պատրաստվում է ներխուժել Լիբիա, եւ, եթե նման բան տեղի ունենա, ապա վերլուծաբանների գնահատմամբ, Մերձավոր Արեւելքում կծագի առավել արյունոտ եւ լարված հակամարտություն, քան դա այսօր կատարվում է Սիրիայում:

«Եգիպտոսը անմիջական աջակցություն է ցուցաբերում Խաֆթարին, նրա համար, որ Լիբիան Եգիպտոսի հարեւան երկիր է, եւ այդ երկու երկրներն ունեն տարածքային վեճ: Խոսքը վերաբերում է բնական զազով եւ նավթով հարուստ տարածքներին: Եթե Լիբիայում իրավիճակի սրումը շարունակվի, դա կարող է հանգեցնել տարածաշրջանային լուրջ հակամարտության», - նման գնահատական են տալիս վերլուծաբանները՝ մեկնաբանելով Եգիպտոսի նախագահ Աբդուլ Փաթաի Աս-Սիսամի նախաձեռնությունը, ըստ որի, երկիրը պատրաստ է օգնել Խաֆթարին եւ, անհրաժեշտության դեպքում, ներգրավվել պատերազմի մեջ:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՏԱՐԱԾԱՆԵՐՉԱՆՈՒՄ

Ինչպես Վրաստանում, այնպես էլ հարեւան Հայաստանում եւ Ադրբեջանում ամեն օր ավելանում է վարակման դեպքերի թիվը: Ինչպես վկայում է «worldometers» վիճակագրությունը, վարակվածների թվով տարածաշրջանում առաջինը Հայաստանն է: Այստեղ հունիսի 26-ին գրանցվել

է 759 նոր դեպք, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասել է 23 247-ի, որից 12 149-ն առողջացել է: Մահացածների թիվը կազմում է 410:

Վարակվածների թվով տարածաշրջանում երկրորդը Ադրբեջանն է: Այստեղ, հրապարակված վիճակագրության համաձայն, հունիսի 26-ին վարակվածների թիվը կազմել է 590 մարդ: Ընդհանուր առմամբ, Ադրբեջանում կորոնավիրուսի վարակ է հայտնաբերվել 14 852 մարդու մոտ: Վարակից մահացել է 180, ապաքինվել՝ 8 059 մարդ:

տարածման պահից վիճակագրությամբ ամենացածր ցուցանիշները գրանցվել են Վրաստանում: Հունիսի 26-ին վարակ է հայտնաբերվել երկու քաղաքացու մոտ, վարակվածների ընդհանուր թիվը հասել է 919-ի, վարակի բռնկումից ի վեր այստեղ ապաքինվել է 780, մահացել՝ 14 մարդ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾԱԳԻՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

առմամբ, փոխանցվել է 28 160 000 լարի: Աշխատանքի աջակցության պետական գործակալության լրատվությանը, 200-ական լարի փոխատուցում է տրվել շուրջ 90 775 մարդու, ովքեր տուժել են համավարակի պատճառով: Փոխանցված գումարը կազմում է 18 151 000 լարի: Նշենք, որ գումարների փոխանցման

գործընթացը շարունակվում է, եւ աստիճանաբար մարդիկ ստանում են իրենց հասանելիք գումարը:

Հիշեցնենք, որ կորոնավիրուսի համավարակի հետեւանքով, տուժածների համար Վրաստանի կառավարության կողմից նախաձեռնված փոխատուցում ստացող անձանց գրանցումն սկսվել էր մայիսի 15-ից եւ կշարունակվի մինչեւ հունիսի 1-ը: Փոխատուցում ստացողների գրանցումն իրականացվում է առողջապա-

հուսյան նախարարության «https://www.moh.gov.ge/» կայք-էջում:

«Դիմումները քննարկում է աշխատողների աջակցության պետական գործակալությունում գործող աշխատանքային խումբը, եւ որոշումը կայացնում է առողջապահության նախարարի հրամանագրով ստեղծված միջգրաստեսական հանձնաժողովը»,- նշված է աշխատանքի աջակցության գործակալության տեղեկության մեջ:

ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ԿԱՎԵԼԱՆԱ



Կորոնավիրուսի պատճառով պետությունը կատարած փոփոխությունների ծրագրվածի համաձայն, ինչպես հայտարարեց Գիտրգի Գախարիան, հունիսի 1-ից կենսաթոշակը կավելացվի:

Նշենք, որ Վրաստանում տարիքային կենսաթոշակը կազմում է 220 լարի: Այսօրվա

Վարչապետի հավաստմամբ, Վրաստանում կենսաթոշակի ավելացումը կիրականացվի ամեն տարի:

- 70-ն անց կենսաթոշակառուների համար այս ավելացումը պայմանավորված է ինչպես արժեզրկմամբ, այնպես էլ տնտեսական աճի 80 տոկոսով: Արժեզրկման եւ տնտեսական աճի ցանկացած ցուցանիշի դեպքում, 2021 թվականին մինչեւ 70 տարեկան կենսաթոշակառուների կենսաթոշակը կավելանա առնվազն 20 լարիով, իսկ 70-ն անց կենսաթոշակառուներին 25 լարիով: Դա այն նվազագույնն է, որը պետությունը պատրաստ է երաշխավորված ներկայացնել կենսաթոշակառուներին,- հայտարարեց վարչապետը:

Նշենք, որ կենսաթոշակների ինդեքսացիան Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից Վրաստանին ներկայացրած հանձնարարականներից մեկն է: Հիմնադրամի վերլուծաբանների կարծիքով, պետական բազային կենսաթոշակի իրատեսական ինդեքսացիայի ընդունումը կնպաստի կենսաթոշակառուների իրական եկամուտների ավելացմանն ու կնվազեցնի տարեցների թվում աղքատության մակարդակը:

դրությամբ, Վրաստանում կանանց կենսաթոշակային տարիքը կազմում է 60, իսկ տղամարդկանցը՝ 65 տարի: Ընդհանուր առմամբ, Վրաստանում կենսաթոշակ է ստանում 770,3 հազար մարդ:

- Նոր բյուջեում պահպանվել է ընթացիկ տարվա սկզբից ծրագրված կենսաթոշակային ավելացումը, երբ բյուջետային չեփանիշները բացարձակապես տարբերվում էին այսօրվանից: Պահպանման մեխանիզմների համաձայն, հունիսի 1-ից 70-ն անց կենսաթոշակառուների կենսաթոշակը կավելացվի 30 լարիով եւ կկազմի 250 լարի,- հայտարարեց Գիտրգի Գախարիան եւ հավելեց, որ բարձրալեռ տարածաշրջաններում 70-ն անց կենսաթոշակառուների կենսաթոշակը հունիսի 1-ից կդառնա 300 լարի:

ՏԱՐԱԾԱՆԵՐՉԱՆ

ԼԻԱ ԳԻԳԱՈՒՐԻՆ ԱՏԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ծրագրերի մասին, որոնք իրականացվել են ինտեգրման հետ կապված խնդիրների լուծման, պետական լեզվի ուսուցման եւ Վրաստանի ազգային փոքրամասնությունների առջեւ ծառայած այլ խնդիրների ուղղությամբ: Նա նաեւ ներկայացրեց հաջողված «1+4» կրթական ծրագիրը:

- Վերջին 10 տարիների ընթացքում «1+4» ծրագրի շրջանակներում ուսանել է 1300 ուսանող, ովքեր լիարժեք տի-

րապետում են վրացերենին, եւ բացի այն, որ նրանք մասնագիտություն են ստացել ու վերադարձել, մեծ մասը նաեւ աշխատանք է գտել: 216 ուսանող, ով հաջողությամբ հանձնել է քննությունները, ուսուցիչ է աշխատում դպրոցներում, նրանցից երկուսը դպրոցի տնօրեններ են: Մենք տեսանք, թե որքան հաջողված է պետության կողմից իրականացվող այս ծրագիրը: Մենք Վրաստանում ունենք նաեւ երկլեզու ուսանողներ,- ասաց Լիա Գիգաուրիին:

Նա ներկաներին առաջարկեց նաեւ

մասնակցել գործողությունների պլանի նախապատրաստմանը՝ ներկայացնելով առաջարկություններ: Հանդիպմանը հնչեցին որոշ առաջարկություններ, այդ թվում՝ երիտասարդության եւ ուսանողների ինտեգրման առումով:

Փաստաթղթի կազմելու գործընթացը շարունակվում է: Խորհրդատվություն ստանալու համար հետագայում նախատեսված են հանդիպումներ:

ԵԿԳԵՆՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ախալքալաքի

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԵՒ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՎՄԱՍՎԱՐԱԿՈՎ ԴԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՎՈՐԱԿԱԼ ՃՎԱԾԱՄԱՆ ԵՐԿԻՐԸ ԿԱՆԳՆԵՅՐԵՅ ԼՈՒՐՁ ՄԱՐՏԱԶՐԱՎԵՐՆԵՐԻ ԱՈՋԵՎ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ված սահմանադրական փոփոխությունների թեմային՝ նշելով, որ եթե մինչ այդ Վրաստանում խորհրդարանական ժողովրդավարություն էր, ապա հունիսի 29-ից երկրում կհաստատվի համաձայնական ընտրակարգի վրա հիմնված խորհրդարանական ժողովրդավարություն:

Անդրադառնալով կառավարության գործունեության թեմային՝ Գիորգի Գախարիան նշեց, որ չնայած մարտահրավերներին, կառավարական ծրագրի առաջնահերթ 4 ուղղություններն իրականացված փուլում են:

- Իհարկե, առաջին հերթին, դրանք անվտանգությունն ու մարդու իրավունքներն են, տնտեսական զարգացումը, կրթությունը եւ մարդկային կապիտալի զարգացումը, պետական կառավարումը, հայտարարեց Գիորգի Գախարիան:

Որպես անվտանգության երաշխիք՝ վարչապետն առանձնացրեց Վրաստանի եվրատլանտյան կառույցներին ինտեգրման նպատակով:

րին ինտեգրման նպատակով ընդգրկված քայլերը:

- Երկրի եվրատլանտյան ինտեգրումն այսօր, որպես փաստ շարունակվում է եւ ակտիվ խորանում, սա այն ուղղությունն է, որը սահմանում է մեր երկրի վաղվա օրը,- նշեց վարչապետն ու հավելեց, որ երկրի եվրատլանտյան ինտեգրումը պետք է ունենա կոնկրետ ուղղություններ, ինչպիսիք են կրթությունը, տրանսպորտը, հաղորդակցությունը, էներգետիկան եւ այլն:

Իր խոսքում Գիորգի Գախարիան անդրադարձավ նաեւ երկրի առջեւ անվտանգության տեսանկյունից ծառայած մարտահրավերներին՝ նշելով, որ Վրաստանի արտաքին քաղաքականության համար կարեւորագույն առաջնահերթությունն մնում է ինքնիշխանության կայունացումը եւ տարածքային ամբողջականության ապահովումը:

- Բոլորս պետք է գիտակցենք, որ այդ խնդիրների կարգավորման միակ ուղին խաղաղ ճանապարհն է, եւ այն հնարավոր է այս գործընթացներում մեր ռազմավարական

գործընկերների ներգրավվածությամբ,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

Անդրադառնալով համավարակի պայմաններում ստեղծված սոցիալական ծանր վիճակի թեմային՝ վարչապետը նշեց, որ կառավարության գլխավոր խնդիրը սահմանափակումների ներդրմամբ խստորեն վերահսկել համավարակի տարածումն է, ինչը վերջին հաշվով հաջողվեց, եւ պատահական չէ, որ գլոբալ համավարակի պայմաններում Վրաստանն այն առաջատար երկրների թվում է, որոնք կարողացել են նվազագույնի հասցնել կորոնավիրուսից ինչպես մարդկային, այնպես էլ՝ տնտեսական տեսանկյունից հնարավոր կորուստները:


Անցնելով տնտեսական թեմային՝ վարչապետը հայտարարեց, որ Էկոնոմիկան երկրի գլխավոր առաջնահերթությունն է: Նրա խոսքով, Վրաստանի Էկոնոմիկայի հիմքն ու ողնաշարը մասնավոր հզոր, ազատ հատվածն է, որը եւ ստեղծում է նոր աշխատատեղեր՝ հանդիսանալով երկրում աղքատության հաղթահար-

ման գլխավոր լծակը: Վարչապետի հավաստմամբ, տնտեսական զարգացման առումով 2019 թվականը լավագույններից մեկն էր, քանի որ տնտեսական աճի ցուցանիշը կազմեց 5,1 տոկոս:

- Երկիրը 2020 թվականն սկսեց գործեց բավական կայուն Էկոնոմիկայով, գլոբալ համավարակն ու դրան հաջորդած տնտեսական գլոբալ ճգնաժամը երկիրը կանգնեցրին լուրջ մարտահրավերների առջեւ,- ասաց վարչապետն ու խոսեց կառավարության կողմից իրականացվելիք այն միջոցառումների մասին, որոնք կոչված են նվազագույնի հասցնելու կորոնավիրուսի համավարակով պայմանավորված տնտեսական կորուստները:

Վարչապետի ելույթից հետո, Վրաստանի խորհրդարանում հանդես եկան խորհրդարանական մեծամասնության ընդդիմության, առանձին խմբակցությունների ներկայացուցիչները: Ավարտին վարչապետը պատասխանեց պատգամավորների հարցերին:

ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ



ՄԵՐԱՎ ՏՈՒՐԱՎԱՆ՝ ՍԱՐՄԱՆԱԴՐՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՐ

Հունիսի 25-ին Բաթումիում անցկացվեց Վրաստանի Սահմանադրական դատարանի նախագահի ընտրությունը: Նախագահի պաշտոնին հավակնում էին Մերաբ Տուրավան ու Իրինա Իմերլիշվիլին: Սահմանադրական դատարանի հինգ դատավորի աջակցությամբ նախագահ ընտրվեց Մերաբ Տուրավան: Իրինա Իմերլիշվիլու թեկնածությունը պաշտպանեց չորս դատավոր:



ՎՐԱՍԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԵՑ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 26-ԱՄՅԱԿԸ

Հունիսի 23-ին Վրաստանի պետական պաշտպանության հատուկ ծառայությունը նշեց հիմնադրման 26-ամյակը: Տարեդարձի առիթով հատուկ ծառայության աշխատակիցներին շնորհավորեցին Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին, վարչապետ Գիորգի Գախարիան:

«Այսօր պետական պաշտպանության հատուկ ծառայության ստեղծումից անցել է 26 տարի: Այս 26 տարիների ընթացքում պետական պաշտպանության ծառայությունը մեծ ներդրում է ունեցել մեր երկրի անվտանգության գործում եւ խաղաղ, ժողովրդավար զարգացման գործընթացում»,- ասված է վարչապետի շնորհավորական ուղերձում:

ՏՈՒՐԻԶՄԻ ԵՎԱՍՈՒՏԸ ԿԵՎԱԶԻ 50 ՏՈՎՈՍՈՎ

Վրաստանի ֆինանսների նախարարությունը ներկայացրել է տնտեսության զարգացման թարմացված մակրոտնտեսական սցենարը, ըստ որի, այս տարի զբոսաշրջության եկամուտները, նախորդ տարվա համեմատ, կնվազեն 50 տոկոսով: Հետեւաբար, անկումը կկազմի 1,65 մլրդ դոլար:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՄԱԿ-Ի ԲԱՆԱՁԵՎԸ՝ ՎՐԱՅ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎԱՍ ԵՎ ԿԱՂԹԱՆԱԿ

Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Ջալկալիանին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի կողմից Վրաստանի վերաբերյալ ընդունած բանաձևը գնահատեց որպես վրաց դիվանագիտության եւս մեկ հաղթանակ:

Նրա խոսքով, բանաձևը արտացոլում է բռնազավթված տարածաշրջաններում մարդու իրավունքների պաշտպանության տեսակետից գոյություն ունեցող իրավիճակը եւ ընդգծում միջազգային մեխանիզմների մուտքի անհրաժեշտությունը: Բանաձևը պարտավորեցնում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն համաձայնակարգին, տարին մեկ անգամ ներկայացնել բռնա-

զավթված տարածքներում մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ գրավոր եւ բանավոր զեկույցներ:

Նախարարի խոսքով, Վրաստանը արդեն չորրորդ տարին անընդմեջ օգտագործում է Մարդու իրավունքների խորհրդի ձեւաչափը երկրի այդպիսի կարեւոր բանաձև ընդունելու համար:

Ըստ Դավիթ Ջալկալիանու, այն փաստը, որ Վրաստանն ամեն տարի ունի

բանաձևի կողմնակիցների դրական, աճող դինամիկա, ցույց է տալիս, որ Վրաստանի հարցը գտնվում է ակտիվ օրակարգում:

Մինչեւ բանաձևի ընդունումը, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 43-րդ նստաշրջանի շրջանակներում, տեղի է ունեցել գլխավոր բանավեճը, որի ընթացքում Վրաստանին աջակցող հայտարարություններ են արվել Բուլղարիայի, Ուկրաինայի, Ֆինլանդիայի, Եստոնիայի, Լիտվայի, Լատվիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի եւ Հունաստանի կողմից:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՐՈՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՍԱՆՈՒՄ

ԱՄՆ ԴԵՏՂԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ պետդեպարտամենտը հրապարակել է 2019 թվականին Վրաստանում կրոնական ազատությունների մասին հաշվետվություն: Փաստաթղթի հեղինակներն ուսումնասիրել են վերլուծել են իրավապաշտպան կազմակերպությունների հաշվետվություններն ու պաշտոնական վիճակագրությունը, որոնք արտացոլում են դավանանքի, ազատության տեսանկյունից երկրում ստեղծված իրավիճակը, կրոնական տարբեր ուղղությունների առավելությունները կամ դրանց նկատմամբ խտրական վերաբերմունքը:

«Օրենքի առջեւ բոլորը հավասար են, սակայն ունանք շատ ավելի հավասար են»,- Վրաստանում կրոնական ազատությունների մասին հաշվետվության մեջ նշել են զեկույցի հեղինակները՝ ընդգծելով «Վրացական Ուղղափառ եկեղեցու արտոնյալ վիճակը մյուս ուղղությունների համեմատ: Խոսքը մասնավորապես վերաբերում է հարկերին, հողատարածքների ձեռքբերմանը, պետությունից առանձին տարածքների՝ որպես նվեր ստացմանը:

Օրենքը Վրաց Ուղղափառ եկեղեցուն տրամադրում է բացառություններ՝ կրոնական մյուս խմբերի համեմատ, այդ թվում՝ արտոնություններ, կրոնական կառույցների շինարարության, վերականգնման, պահպանման, հարկերի վճարման, ինչպես նաեւ գույքահարկի մուծման հարցում: Այն վրացական եկեղեցու պատրիարքությանը ազատում է եկեղեցական նպատակներով օգտագործվող խաչերի, մոմերի, սրբապատկերների, գրքերի եւ օրացույցների վաճառքի շահույթից, որը չի գործում կրոնական մյուս ուղղությունների նկատմամբ: Բացի այդ, օրենքը հռչակում է, որ միայն Վրաց Ուղղա-

փառ եկեղեցին է կրոնական ոչ մի այլ ուղղություն իրավասու չէ գնել պետական սեփականության ներքո գտնվող ոչ գյուղատնտեսական նշանակության հողատարածք՝ կառավարության կողմից ուղղակի վաճառքի ուղիով: Եթե կրոնական մյուս ուղղությունները ցանկանում են գնել նման գույք, նրանք պետք է մասնակցեն բաց մրցույթներին: Միայն Վրաց եկեղեցին իրավունք ունի անվճար ստանալ պետական սեփականության ներքո գտնվող գյուղատնտեսական հողատարածք, մյուսները դրա համար վճարելու են»:

Նշենք, որ, ըստ պետդեպարտամենտի հաշվետվության, ԱՄՆ կառավարությունը Վրաստանի բնակչությունը գնահատում է ընդամենը 4,9 միլիոն մարդով: 2014 թվականի մարդահամարի տվյալներով, Վրաց Ուղղափառ եկեղեցու հավատացյալները կազմում են այդ թվի 83,4 տոկոսը: Նրանց 10,7 տոկոսով հաջորդում են մահմեդականները եւ 2,9 տոկոսով՝ Հայ Առաքելական եկեղեցու հավատացյալները: Մնացած 3 տոկոսում ընդգրկված են կաթոլիկները, եզդիները, ուղղափառ հույները, հրեաները եւ «ոչ ավանդական» կրոնական խմբերը, ինչ-

պիսիք են բապտիստները, եհովայի վկաները, հիսունականները եւ կրիշնայի միջազգային ընկերության ներկայացուցիչներն ու նրանք, ովքեր կրոնական ոչ մի դավանանքի չեն հետեւում:

Ընդ որում, ազգային, կրոնական պատկանելությունները եւ բնակչության վայրը սերտորեն միախլուսված են: Այսպես, էթնիկ վրացիների մեծամասնությունը ներառված է Վրաց Ուղղափառ եկեղեցուն, ոչ մեծ թվով ազգությամբ ռուսները՝ Վրաց Ուղղափառ եկեղեցու հետ չկապված մի քանի ուղղափառ խմբերի, այդ թվում՝ ռուսական Ուղղափառ եկեղեցու, մոլդովացիների, հնադավանների եւ դուխոբորների դավանանքի հետերորդներն են: Էթնիկ ադրբեջանցիները գլխավորապես մահմեդական շիիթներ են եւ հարավարեւելյան Քվեմո Քարթլիի տարածաշրջանի բնակչության մեծամասնությունն են կազմում: Մահմեդական մյուս խմբերը, այդ թվում՝ էթնիկ վրաց մահմեդականները, ապրում են Աջարիայում, իսկ քիստերը՝ երկրի հյուսիսարեւելյան մասում: Այդ երկու խմբերի հավատացյալները հիմնականում մահմեդական սյունիներ են: Վրացական ծագմամբ մահմեդական սյունիներ են ապրում նաեւ Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում: Ազգությամբ հայերը դավանում են Հայ Առաքելական եկեղեցուն եւ կազմում են Սամցխե-Ջավախեթի բնակչության մեծամասնությունը:

ՄԻՄՈՆ ԿԻԼԱՉԵ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏՎԵՑԻՆ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐՈՎ

(Այկաբը՝ 1-ին էջում)

անդամների 100 տոկոսանոց ներկայությունը եւ, հինգ կամ ավելի պատգամավորների բացակայության դեպքում, փոփոխությունները չէին ընդունվի:

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՅՈՒՄ՝ 136 «ԿՈՂԱ», 5 «ՂԵՄ»

Կիրակի օրը՝ հունիսի 21-ին, խորհրդարանի լիագումար նիստին ներկա էին գործնականում բոլոր պատգամավորները, բացառությամբ «Ազգային շարժման» ներկայացուցիչների: Սկզբից եւթ վեց պատգամավորներ հայտարարեցին, որ սահմանադրական փոփոխությունները չեն պաշտպանելու: Այդ օրը գրանցված 142 պատգամավորներից 136-ը պաշտպանեցին սահմանադրական փոփոխությունների օրինանախագիծը: Այլ խոսքով, ի պաշտպանություն սահմանադրական փոփոխությունների, «Եվրոպական Վրաստանի» եւ բոյկոտի ռեժիմում գտնվող «Ազգային շարժման» անդամներից բացի, սահմանադրական փոփոխությունները պաշտպանեց 136, դեմ քվեարկեց հինգ պատգամավոր՝ **Քիծինա Գեգիծեն, Ալեքսանդր Էրզվանիան, Էմգար Կվիցիանին, Կախաբեր Օքրիաշվիլին եւ Դավիթ ճիճինաձեն:** Պատգամավոր Նատո Չխեիձեն քվեարկությանը չմասնակցեց:

ՕՐԻՆԱՆԱԽԱԳԾՈՎ ԾՐԱԳՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրինանախագծի համաձայն, 2020 թվականի խորհրդարանական ընտրությունները կանցկացվեն խառը ընտրակարգով (120 համամասնական եւ 30 մեծամասնական) եւ մեկ տոկոսի ընտրաշեմով: Օրինանախագիծը նախատեսում է նաեւ այսպես կոչված 40 տոկոսանոց եզրագծային մեխանիզմ, ըստ որի կուսակցությունը, որը 2020 թվականի խորհրդարանական ընտրություններին համամասնական ընտրակարգով ստանա ընտրողների ձայների 40,54 տոկոսից քիչ, ինքնուրույն կառավարություն ձեւավորելու իրավասություն չի ունենա: Սահմանվել է նաեւ համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերով, ընդհանուր առմամբ, ստացած մանդատների համեմատականությունը, որի գերազանցման դեպքում մվազեցվում է համամասնական ընտրակարգով կուսակցության կամ ընտրական դաշինքի ցուցակով ստացած մանդատների թիվը, եւ այն բաշխվում է ընտրություններին մասնակից քաղաքական մյուս կուսակցությունների եւ ընտրական դաշինքների կողմից ներկայացված ընտրացուցակների միջեւ, որոնք կարողացել են հաղթահարել ընտրաշեմի արգելքը:

Սահմանադրական օրինանախագիծով կարգավորված է նաեւ ընտրական դաշինքների հարցը: Մասնավորապես, համամասնական ընտրակարգով անցկացված ընտրությունների արդյունքում խորհրդարանական մանդատները կբաշխվեն այն քաղաքական կու-

սակցությունների ընտրադաշինքներին, որոնց կողմից ստացված իրական ձայների տոկոսային ցուցանիշն առնվազն հավասար է մեկ տոկոսի ու ընտրադաշինքում ներգրավված քաղաքական կուսակցությունների քանակության արտադրյալին:

Ինչ վերաբերում է չբաշխված մանդատներին, ապա դրանք կբաշխվեն լավագույն արդյունք ստացած կուսակցությունների եւ ընտրական բլոկների միջեւ:

ԿԶԵՎԱՎՈՐՎԵՆ 30 ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱՍԱՐԱԾՔՆԵՐ

2020 թվականի խորհրդարանական ընտրություններին ողջ երկրի տարածքով կծեակերպվեն միամանդատ մեծամասնական 30 ընտրատարածքներ:

Թբիլիսիի մեծամասնական ընտրատարածքները հետեւյալն են. Մթածմինդայի եւ Կրծանիսի, Վակեի, Սաբուրթալայի, Իսանի, Սամգորի, Դիդուբեի եւ Չուղուրեթի, Գլդանի, Նաձալադեի շրջանները:

Ինչ վերաբերում է տարածաշրջաններին, ապա ընտրատարածքների բաշխումը հետեւյալն է.

Կախեթում ձեւակերպվում է երկու ընտրատարածք (մեկ ընտրատարածքում միավորվում են Թելավի, Ախմետայի, Ղվարեթի եւ Լազոդեթի մունիցիպալիտետները, երկրորդում՝ Գուրջանի, Սագարեջոյի, Դեդոփլիսոճարոյի, Սիդնաղի մունիցիպալիտետները):

Քվեմո Քարթլի տարածաշրջանում կծեակորվի երեք ընտրատարածք (մեկում կմիավորվեն Ռուսթավի եւ Գարդաբանի մունիցիպալիտետների, Նիորի, Մարտղոփի, Ախալստիեթի, Սարթիճալայի, Գամարովերայի, Ախալի Սամգորի, Լեձվենիերասի, Թելեթի, Կումիսիի եւ Կրծանիսի վարչական միավորները, երկրորդում՝ Մառնեուլի եւ Գարդաբանի մունիցիպալիտետները, երրորդում՝ Բոլնիսի, Դանիսի, Թեթրիճարոյի եւ Ծակայի մունիցիպալիտետները):

Շիրա Քարթլում կգործեն երկու ընտրատարածքներ (մեկում կմիավորվեն Կասպի եւ Գորի մունիցիպալիտետները, երկրորդում՝ Խաշուրի եւ Քարեթի մունիցիպալիտետներն ու Գորի մունիցիպալիտետի Վարիանի, Սիքոզի, Տիրմիսի, Սկրիսի եւ Շինդիսի վարչական միավորները):

Սցխեթա-Թիանթիում կգործի մեկ ընտրատարածք, որը կմիավորի Սցխեթայի, Դուլեթի, Թիանթի եւ Ղազբեգի մունիցիպալիտետները:

Սամցխե-Ջավախեթի երկրամասում կծեակորվեն երկու ընտրատարածքներ, որոնցից առաջինը կներառի Ախալցխեի, Բորժոմի, Աղիզեի եւ Ասպինձայի մունիցիպալիտետները, իսկ երկրորդը՝ Ախալքալաքի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետները:

Գուրիայի երկրամասում ձեւակերպված մեկ ընտրատարածք կներառի Օգուրգեթի, Լանջխուբի եւ Չոխատուրի մունիցիպալիտետները:

Սամեղրեյոյի երկրամասում կլինեն երեք ընտրատարածքներ (մեկում կմիավորվեն Չուգրի մունիցիպալի-

տետը, երկրորդում՝ Փոթիի, Խոբիի եւ Սենակիի մունիցիպալիտետները, երրորդում՝ Ծալենցիխայի, Չխորոճուրի, Մարտվիլիի եւ Աբաշայի մունիցիպալիտետները):

Ռաճա-Լեջխումի-Սվանեթի մեկ ընտրատարածքում կմիավորվեն Ամբրուաուրի, Օճի, Ցագերի, Լեւոնտիսիի եւ Սեստիայի մունիցիպալիտետները:

Իմերեթի երկրամասում կծեակերպվի չորս ընտրատարածք (առաջինում կմիավորվեն Քութայիսիի մունիցիպալիտետը, երկրորդում՝ Սաջխեթի, Ճիաթուրայի եւ Խարազաուլի մունիցիպալիտետները, երրորդում՝ Տղիբուլի, Թերջոլայի, Չեստափոնիի եւ Բաղդադի մունիցիպալիտետները, երրորդում՝ Սամտրեդիայի, Ծղալտուբոյի, Վանիի եւ Խոնիի մունիցիպալիտետները):

Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում կգործեն երեք ընտրատարածքներ, որոնցից մեկում կմիավորվեն Բաթումի մունիցիպալիտետը, երկրորդում՝ Քոբուլեթի մունիցիպալիտետը եւ Խելվաջաուրի մունիցիպալիտետի, Մախիճաուրի, Օրթա-Բաթումիի, Ախալ-շենիի եւ Փերիի վարչական միավորները, երրորդում՝ Խելվաջաուրի, Քեդի, Շուախեի եւ Խուլոյի մունիցիպալիտետները:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՌԱՑ ԸՆԴԴՍԱԿՐ ՊԱՏՊԱՆԱՎՈՐՆԵՐԻ, ՀԱՍՏԱՏՎԵՑԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՅԱՐ

Հունիսի 23-ին Վրաստանի խորհրդարանը ձեռնամուխ եղավ ընտրական նոր օրենսգրքի հարցով իրականացվելիք սահմանադրական փոփոխությունների օրինանախագծի երկրորդ ընթերցումով քննարկմանը:

Ինչպես արդեն նշել ենք, հունիսի 21-ին խորհրդարանը, խորհրդարանական մեծամասնությամբ եւ «Եվրոպական Վրաստան» ընդդիմադիր խմբակցության անդամների ձայներով առաջարկված փոփոխությունները հաստատեց, եւ սակայն երկրորդ ընթերցումով քննարկմանը, «Եվրոպական Վրաստան», ընդդիմության մյուս խմբակցությունների օրինակով, որոշեց բոյկոտել լիագումար նիստը:

Այդուհանդերձ, Վրաստանի խորհրդարանը՝ 115 կողմ եւ երեք դեմ ձայներով, երկրորդ ընթերցումով հաստատեց սահմանադրական փոփոխությունները:

Նշենք, որ հունիսի 26-ին Վրաստանի խորհրդարանի գարնանային նստաշրջանը փակվում է, հետեւաբար, սահմանադրական փոփոխությունների վերջնական հաստատման համար հարկ կլինի հրավիրել խորհրդարանի արտահերթ նիստ:

Ինչպես նշեց խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն, արտահերթ նիստը կհրավիրվի հունիսի 29-ին եւ, անկախ ընդդիմադիր պատգամավորների դիրքորոշման, խորհրդարանական մեծամասնությունն ի վիճակի է ապահովել սահմանադրական փոփոխությունների վերջնական ընդունումը:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԳԻՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆՔ ԱՆՅՎԱՅՆԵՆ ԹԱՓԱՆՅԻՎ, ԱՐԴԱՐ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Հունիսի 22-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ անցկացվեց կորոնավիրուսի դեմ պայքարի միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստը, որի ընթացքում վարչապետն անդրադարձավ հունիսի 21-ին խորհրդարանի կողմից սահմանադրական փոփոխությունների օրինանախագծի առաջին լսումով հաստատման թեմային:

Նրա խոսքով, օրինանախագծի ընդունումից հետո փաստորեն սկսվել է ընտրությունների քաղաքական գործընթացը, եւ կառավարությունը պարտավոր է ու պատասխանատու ապահովել ամեն ինչ, որպեսզի մենք, ինչպես միշտ, անցկացնենք թափանցիկ, արդար եւ առավելագույնս ժողովրդավարական ընտրություններ, այնպիսի ընտրություններ, որոնք կունենան եւս մեկ որակական հիմնավորում՝ Վրաստանում առաջիկա ժողովրդավարական առաջընթացի գործում:

Կառավարության ղեկավարի խոսքով, ընտրական համակարգի փոփոխությունը մեր երկրի ժողովրդականացման որակի հետագա կատարելագործման կարևոր քայլ է:

- Նախեւառաջ, եւ կցանկանայի շնորհավորել մեր խորհրդարանի անդամներին այս հաջողության առիթով: Իհարկե, սա

որոշում էր, որը մենք բոլորս ակնկալում էինք, եւ բազմիցս ասել ենք, որ համամասնական ընտրական համակարգը միակ ճանապարհն է, որպեսզի մեր երկրում փուլ առ փուլ բարելավվի քաղաքական մշակույթը, սկսվեն փոփոխություններ, դառնանք ավելի ժողովրդավար, ու այս ամենը մեզ տանի դեպի մեր հիմնական նպատակ՝ եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրում,- ասաց վարչապետը:

Գիորգի Գախարիայի խոսքով, գլոբալ համավարակի պայմաններում ընտրությունների անցկացումը լուրջ մարտահրավեր է, ինչի հաղթահարումը երկրին կընձեռի լուրջ փորձաշրջանը հաջողությամբ պսակելու հնարավորություն:

Միջգերատեսչական համակարգող խորհրդի նիստում, Գիորգի Գախարիան դիմեց նաեւ Հիվանդությունների վերահսկման եւ հան-



րային առողջապահության ազգային կենտրոնի տնօրեն Ամիրան Գամդրելիձեին ընդգծելով, որ առողջապահության եւ տնտեսության հետ մեկտեղ օրեցօր ակտիվանում է նաեւ երկրի հասարակական-քաղաքական կյանքը, եւ սա նույնպես պետք է հաշվի առնվի համաճարակաբանական տեսանկյունից:

- Համավարակի դեմ պայքարից, առողջապահությունից եւ տնտեսական խնդիրներից բացի, մենք նաեւ քաղաքական հարթակում ենք գործելու,- նշեց վարչապետն ու հավելեց, որ համամասնական ընտրական համակարգը երկրում քաղաքական մշակույթի բարելավման միակ ճանապարհն է:

ՄԻՄՆ ԿԻԼԱՉԵ

ԼՔԵՑԻՆ «ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ԱԼՅԱՆԱԸ»

Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Էմգար Կվիցիանին հայտարարեց «Վրաստանի հայրենասերների այլանսի» խորհրդարանական խմբակցությունից դուրս գալու մասին: Նրա հայտարարությամբ, կուսակցությունից դուրս է գալիս, քանի որ «սեփական խենթ որոշումներով չի ցանկանում ցավ պատճառել «Վրաստանի հայրենասերների այլանսի» անդամ բարեկամներին:

Խոսելով ապագա ծրագրերի մասին՝ Կվիցիանին հայտարարեց, որ «շարունակելու է պայքարը Վրաստանի պաշտպանության համար»:

«Վրաստանի հայրենասերների այլանսի» դուրս եկավ նաեւ Բեժան Գունավան: Նա հայտարարեց նոր կուսակցության կազմավորման մտադրության մասին: Այն կոչվելու է «Վրացական ընտրություն» («Քարթուլի արչեւանի»): Հիշեցնենք, որ Բեժան Գունավան «Վրաստանի հայրենասերների այլանսի» ակտիվիստ է, մասնակցել է տարբեր բողոքի ցույցերի: